Հաստատված է
ՀԱՀ՝ Գ.Գրիգորյան
31.08.2022թ

Համաշխարհային պատմություն
11-րդ դասարան
Թեմատիկպլանավորում
Տարեկան 34 ժամ
Շաբաթական 1 ժամ

Դասագրքի հեղինակներ՝ Գ.Հարությունյան, Վ.Ղեչյան, Ռ.Սաֆրաստյան
(Զանգակ հրատարակչություն, Երևան 2017)

Կազմողներ՝

Խաչյան Արմենուհի՝ Երևանի Արամայիս Երզնկյանի անվան հ.118 ավագ դպրոց, Հայկանուշ Ղևոնդյան՝ Երևանի Ալ. Բլոկի անվ. հմ 122 հիմնական դպրոց,Ղազարյան Արփինե՝ Գր.Բաղյանի անվան հ.141 հիմն. դպրոց, Սահակյան Սվետլանա՝ Չարենցավանի N 2 հիմնական դպրոց, Լյուդմիլա Գրիգորյան՝ Սիսիանի ավագ դպրոց, Կարինե Ավետիսյան՝ Արարատի մարզի Վանաշենի միջնակարգ դպրոց

Պատասխանատու՝ ԿԶՆԱԿ-ի ումնական բնագավառների մշակման և զարգացման բաժնի մասնագետ՝ Կարինե Հարությունյան:

Մաս 1		**Միջին դարեր**
Բաժին Ա		**Քաղաքակրթության վերելքը Եվրոպայում**
Գլուխ 1		**Դասական միջնադարը Եվրոպայում**
Նպատակ		Նկարագրել խաչակրաց արշավանքների պատճառները, ավատատիրական հասարակության ձևավորման առանձնահատկությունները: Ներկայացնել Անգլիայի և Ֆրանսիայի միավորման գործընթացը, «Ոսկե բուլլա»-ի և ռեկոնկիստայի նշանակությունը, պապականության դիրքերի ամրապնդման քայլերը: Ներկայացնել Բյուզանդական կայսրության անկման պատճառները և գաղափարաքաղաքական հոսանքների ծրագրերը: Թվարկել բյուզանդական մշակույթի բնագավառները և նշանավոր գործիչներին: Ներկայացնել Կիևյան Ռուսիայի ստեղծման նախադրյալները և իշխանության ամրապնդմանն ուղղված իշխանների քայլերը:
Վերջնարդյունքներ		Բնութագրել խաչակրաց արշավանքները և դրանց հետևանքները, ներկայացնել դասային միապետությունների ձևավորման գործընթացը: Նկարագրել Ֆրանսիայի և Անգլիայի միավորման արդյունքները: Համեմատել Գերմանիայի և Իսպանիայի վարած քաղաքականության տարբերությունները միավորման գործընթացում: ՆերկայացնելԲյուզանդական կայսրության անկման հետևանքները: Համեմատել բյուզանդական մշակույթը Վերածննդի մշակույթի հետ: Ներկայացնել քրիստոնեության ազդեցությունը միասնական պետության ձևավորման և մշակույթի զարգացման վրա:
Ժամ	**Էջ**	**Դաս**
1	10-15	Դաս 1. Խաչակիրների դարաշրջանը
1	15-20	Դաս 2. Սոցիալ-տնտեսականև քաղաքական միջավայրը
1	20- 24	Դաս 3.Կենտրոնացված պետության կազմավորումը Ֆրանսիայում և Անգլիայում
1	25-29	Դաս 4. Գերմանիան և Իսպանիան
1	29-32	Դաս 5. Պապականությունը XI-XV դարերում

1	36-40	Դաս 7. Դասական միջնադարի մշակույթը
1	40-44	Դաս 8. Վաղ վերածննդի մշակույթը Իտալիայում
1	44-47	Դաս 9. Բյուզանդական կայսրության անկումը
1	47-51	Դաս 10. Բյուզանդական մշակույթը IX-XV դդ
1	51-59	Դաս11. Միջնադարյան քաղաքակրթությունը Ռուսիայում
Բաժին Բ		**Արևելքի և Ամերիկայի հասարակությունները**
Գլուխ 1.		**Միջնադարն Արևելքում և Ամերիկայում**
Նպատակ		Թվարկել միջնադարյան Հնդկաստանի պետությունները, Չինաստանի հասարակության խմբերը: Ներկայացնել Ճապոնիայի կառավարման կլանային համակարգի էությունը, Արաբական խալիֆայության կազմավորումը, Իրանի իսլամացման գործընթացը, քոչվորական պետությունների կազմավորման գործընթացը: Նկարագրել մինչկոլումբոսյան Ամերիկայի բնիկների սովորույթներն ու բարքերը: ինկերի և մայաների երկրների նվաճման գործընթացը:
Վերջնարդյունքներ		Նկարագրել միջնադարյան Հնդկաստանի սոցիալական միջավայրը և մշակույթը, չինական մշակույթի ուղղությունները և թվարկել գյուտերը: Ներկայացնել Ճապոնիայի կրոնական ուղղությունները և մշակույթի ձեռքբերումները: Թվարկել իսլամական մշակույթի մի քանի նվաճումներ: Վեր հանել քոչվորական հասարակությունների ընդհանրությունները: Նշել մինչկոլումբոսյան Ամերիկայի բնիկների ընդհանրություններն ու առանձնահատկությունները: Նկարագրել իսպանական նվաճումների հետևանքները:
Ժամ	**Էջ**	**Դաս**
1	59-64	Դաս 1. Հինդու քաղաքակրթությունը
1	64-68	Դաս 2. Չինական քաղաքակրթությունը միջնադարում
1	68-72	Դաս 3. Ճապոնիան միջնադարում
1	72-75	Դաս 4. Իսլամական քաղաքակրթությունը
1	75-79	Դաս 5. Քոչվորական քաղաքակրթությունները
1	80-84	Դաս 6. Մինչկոլումբոսյան Ամերիկան
1	84-87	Դաս 7. Ամերիկայի նվաճումը իսպանացիների կողմից
Բաժին Գ		**Եվրոպական քաղաքակրթությունը նոր ժամանակների շեմին**
Գլուխ 1		**Միջնադարյան քաղաքակրթության անկումը**
Նպատակ		Նկարագրել Աշխարհագրական մեծ հայտնագործություններ հետևանքները, բողոքական եկեղեցիների ձևավորման գործընթացը, գիտական հեղափոխության նախադրյալներն ու արդյունքները:
Վերջնարդյունքներ		Թվարկել Նոր Եվրոպայի ձևավորման գործոնները, Բարձր Վերածննդի գործիչներին և բնութագրել նրանց ստեղծագործությունները:
Ժամ	**Էջ**	**Դաս**
2	87-94	Դաս 1-2. Նոր Եվրոպայի ծնունդը
1	94-98	Դաս 3. Արևմտյան Եվրոպայի մշակույթը
Մաս 2		**Նոր ժամանակներ**
Բաժին Ա		**Արդյունաբերական քաղաքակրթության ձևավորումն ու զարգացումը Եվրոպայում և Ամերիկայում**

Նպատակ		Նկարագրել աշխարհի քաղաքական պատկերը XVI-XVII դարերում, թվարկել արդյունաբերական քաղաքակրթության առաջացման նախադրյալները:
Վերջնարդյունքներ		Համեմատել գաղութացված երկրների զարգացման աստիճանները: Ներկայացնել Եվրոպայի սոցիալ - տնտեսական կյանքը:
Ժամ	**Էջ**	**Դաս**
1	99- 103	Դաս 1. Աշխարհի քաղաքական քարտեզը XVI-XVII դարերում
1	104-108	Դաս 2. Արդյունաբերական քաղաքակրթության առաջացման նախադրյալները Եվրոպայում:
Գլուխ 2		**Եվրոպական քաղաքակրության զարգացման տնտեսական և սոցիալական առանձնահատկությունները**
Նպատակ		Ներկայացնել արդյունաբերական հեղաշրջման նախադրյալները և հետևանքները, գիտատեխնիկական մեծ թռիչքին բնորոշ կողմերն ու արդյունքները, արդյունաբերական հասարակության սոցիալական կառուցվածքը:
Վերջնարդյունքներ		Թվարկել գիտական կարևոր հայտնագործությունները: Ներկայացնել արդյունաֆինանսական կապիտալի և համաշխարհային շուկային ձևավորումը: Նկարագրել նոր դարերի հասարակության սոցիալական պատկերը:
Ժամ	**Էջ**	**Դաս**
1	108-112	Դաս 1. Արդյունաբերական հեղաշրջումը Եվրոպայում
1	112-116	Դաս 2. Արդյունաբերության կենտրոնացման ու խոշորացման արդյունքները
1	116-119	Դաս 3. Արդյունաբերական քաղաքակրթության առաջացման սոցիալական արդյունքները
Գլուխ 3		**Քաղաքական-գաղափարական կյանքը Եվրոպայում**
Նպատակ		Թվարկել լուսավորականներին և նրանց գաղափարները, 19-րդ դարում առաջացած քաղաքական հոսանքների հիմնական գաղափարներն ու գործիչներին: Ներկայացնել հասարակական-քաղաքական կյանքի զարգացման հետևանքները Անգլիայում, սահմանադրական կարգերի հաստատման ընթացքը Ֆրանսիայում: Թվարկել Գերմանական կայսրության ստեղծման նախադրյալները, 1848-49թթ. հեղափոխության արդյունքները Ավստրո-Հունգարիայում, Ռիսորջիմենտոյի ժամանակաշրջանի հետևանքները: Ներկայացնել ազգային-ազատագրական պայքարի արդյունքները Բալկաններում, Ռուսաստանում XVII-XVIII դարերում իրականացված բարեփոխումների հետևանքները:
Վերջնարդյունքներ		Համեմատել տարբեր երկրներում սահմանադրական կարգի հաստատման գործընթացը, 19-րդ դարում առաջացած քաղաքական հոսանքները: Բացատրել համընդհանուր ընտրական իրավունքի էությունը: Համեմատել Ֆրանսիայի երեք հանրապետությունների ձեռքբերումները: Ներկայացնել Գերմանիայի պետական կարգը, Ավստրո-Հունգարիայի պետական կարգի գլխավոր առանձնահատկությունը: Ցույց տալ Իտալիայի պետական կառավարման համակարգի առանձնահատկությունները:

		Ներկայացնել հեղափոխական շարժման ուղղությունները Ռուսաստանում:
Ժամ	**Էջ**	**Դաս**
1	120-123	Դաս 1. Ժողովրդավարության հաստատման գործընթացը
1	123-127	Դաս 2. Հասարակական – քաղաքական ուսմունքները և շարժումները
1	127-130	Դաս 3. Սահմանադրական կարգի հաստատման Անգլիայի ուղին
1	131-134	Դաս 4. Սահմանադրական կարգի հաստատման Ֆրանսիայի ուղին
1	135-138	Դաս 5. Գերմանիա. Մասնատվածությունից մինչև միավորում
1	138-141	Դաս 6. Ավստրո-Հունգարիան՝ առանձնահատուկ սահմանադրական կայսրություն
1	141-145	Դաս 7. Իտալիա. Ազգային միասնության հաստատումը
1	145-148	Դաս 8. Ազգային պետությունների առաջացումը և արդիականացման գործընթացը Բալկանյան երկրներում
1	149-152	Դաս 9. Ռուսական քաղաքակրթության զարգացման ուղին
Գլուխ 4		**Արդյունաբերական հասարակության ձևավորման ամերիկյան ուղին**
Նպատակ		Ներկայացնել ԱՄՆ-ի առաջացման և Սահմանադրության ընդունման գործընթացը, քաղաքացիական պատերազմի պատճառները: Թվարկել արդյունաբերական հեղաշրջման ձեռքբերումները, Լատինական Ամերիկայում ծավալված անկախության համար պայքարի արդյունքները:
Վերջնարդյունքներ		Գծապատկերի տեսքով ներկայացնել ԱՄՆ-ի կառավարման համակարգը: Ներկայացնել Ա. Լինկոլնի ձեռնարկած քայլերի հետևանքները, Թ. Ռուզվելտի և Վ. Վիլսոնի կատարած բարեփոխումները: Համեմատել Լատինական Ամերիկայի երկրների կառավարման համակարգերը:
Ժամ	**Էջ**	**Դաս**
1	153-157	Դաս 1.Ամերիկայի Միացյալ Նահանգների առաջացումը
1	157-161	Դաս 2. ԱՄՆ-ը XIX դարի առաջին կեսին: Քաղաքացիական պատերազմը
1	161-165	Դաս 3. Արդյունաբերական քաղաքակրթության ձևավորումը ԱՄՆ-ում
1	165-168	Դաս 4. Անկախ պետությունների առաջացումը Լատինական Ամերիկայում
Բաժին Բ		**Ավանդական հասարակությունները: Գաղութային համակարգը**
Գլուխ 5		**Արևելքի երկրները**
Նպատակ		Նկարագրել Օսմանյան կայսրության դրությունը 17-18-րդ դդ. և իրականացված բարենորոգումները, Մուհամեդ Ալիի բարեփոխումներն ու դրանց հետևանքները, Իրանի դրությունը Ղաջարների հարստության օրոք, Չինաստանի և Ճապոնիայի արդիականացման ընթացքը
Վերջնարդյունքներ		Ներկայացնել երիտթուրքերի վարած քաղաքականության էությունը և նպատակը, ազգային ազատագրական պայքարը արաբական մի շարք երկրներում: Ներկայացնել Իրանի 1905-1911թթ սահմանադրական շարժման հետևանքները: Համեմատել Չինաստանի և Ճապոնիայի արդիականացման արդյունքները:
Ժամ	**Էջ**	**Դաս**
1	169-174	Դաս 1. Օսմանյան կայսրությունը ը XVII դարից մինչև XX դարի սկիզբը
1	174-178	Դաս 2. Արաբական երկրները Նոր ժամանակներում
1	178-181	Դաս 3. Իրանը Նոր ժամանակներում
1	182-185	Դաս 4. Չինաստանը, Ճապոնիան և արդիականացումը

Գլուխ 6		Համաշխարհային գաղութային համակարգը
Նպատակ		Ներկայացնել Նոր ժամանակների գաղութային տերությունները և գաղութացման գործընթացի առանձնահատկությունները: Նկարագրել անգլիական վերաբնակեցված գաղութները, մյուս գաղութների զարգացման ուղի:
Վերջնարդյունքներ		Նկարագրել ստրկության վերացման համար պայքարի դրսևորումները Եվրոպայում և ԱՄՆ-ում: Ներկայացնել գաղութային համակարգի ստեղծման հետևանքները:
Ժամ	Էջ	Դաս
1	185-188	Դաս 1. Գաղութային համակարգի առաջացումը
1	188-191	Դաս 2. Համաշխարհային գաղութացման համակարգի կազմավորման ավարտը
Բաժին Գ		Միջազգային հարաբերությունները Նոր ժամանակներում: Առաջին աշխարհամարտը
Գլուխ 7		Միջազգային հարաբերությունները Նոր ժամանակներում
Նպատակ		Նկարագրել միջազգային հարաբերությունները մինչև նապոլեոնյան դարաշրջանը, Վիեննայի վեհաժողովի և Սրբազան դաշինքի նշանակությունը: Նշել Եվրոպայում ձևավորված ռազմաքաղաքական դաշինքներ, Անտանտի և Եռյակ դաշինքի միջև հակասությունների սրման պատճառները
Վերջնարդյունքներ		Ներկայացնել նապոլեոնյան Ֆրանսիայի արտաքին քաղաքականությունը, բացատրել միջազգային հարաբերությունների սրման պատճառները XIX դարի կեսերին: Ներկայացնել միջազգային համաժողովների նշանակությունը: Բնութագրել արդարացի և անարդարացի պատերազմները:
Ժամ	Էջ	Դաս
1	192-196	Դաս 1. Միջազգային հարաբերությունները XVII դարից մինչև Նապոլեոնյան դարաշրջանի ավարտը
1	196-200	Դաս 2. Միջազգային հարաբերությունները 1814-1860-ական թթ.
1	200-204	Դաս 3. Միջազգային հարաբերությունները XIX դ. վերջին և XX դ. սկզբին
1	204-207	Դաս 4. Նվաճողական պատերազմները XIX դարի վերջին և XX դ. սկզբին
Գլուխ 8		Առաջին աշխարհամարտը 1914-1918 թթ.
Նպատակ		Ներկայացնել Առաջին աշխարհամարտի մասնակից երկրների ակնկալիքները, Առաջին աշխարհամարտի գլխավոր ճակատները: Թվարկել Օսմանյան տերության՝ պատերազմի մեջ մտնելու պատճառները, Ռուսաստանում միապետության տապալման պատճառները և ընթացքը:
Վերջնարդյունքներ		Բացատրել Առաջին աշխարհամարտի սանձազերծման պատճառները: Թվարկել Առաջին աշխարհամարտի գլխավոր ճակատամարտերը: Նկարագրել պատերազմի ընթացքը ռուս-թուրքական ճակատում 1914-1916 թթ.: Ներկայացնել Հոկտեմբերյան հեղափոխության, Առաջին աշխարհամարտի հետևանքները:
Ժամ	Էջ	Դաս
1	208-212	Դաս 1.Արդյունաբերական քաղաքակրթության մեծ ճգնաժամը
1	212-215	Դաս 2. Առաջին աշխարհամարտի ընթացքը Եվրոպայում 1914-1916 թթ.
1	215-219	Դաս 3. Առաջին աշխարհամարտը և Օսմանյան տերությունը
1	[illegible]	[illegible]

Գլուխ 9.		**Մշակույթի զարգացման միտումներն ու նվաճումները**
Նպատակ		Ներկայացնել կրթական համակարգում տեղի ունեցած փոփոխությունները Նոր ժամանակներում, գիտատեխնիկական հեղաշրջման արդյունքները: Թվարկել XVII դարում առաջացած գեղարվեստական նոր ուղղությունները, XVIII դարի գեղարվեստական ոճերը: Ներկայացնել Ռոմանտիզմի և Ռեալիզմի էությունն ու բնորոշ գծերը:
Վերջնարդյունքնեբ		Թվարկել XVII-XIX դարի գիտության բնագավառները և գործիչները, նոր դարերում կատարված գիտական հայտնագործությունները և գյուտերը: բնութագրել XVII դարի գեղարվեստական մշակույթը: Գծապատկերով ներկայացնել նոր ուղղությունների տարբեր երկրների գործիչներին և ստեղծագործությունները: Թվարկել ռոմանտիզմի դարաշրջանի մշակութային գործիչներին ՝ ըստ բնագավառների: Համեմատել XIX դարի գեղարվեստական մշակույթում ձևավորված ոճերը:
Ժամ	**Էջ**	**Դաս**
1	227-232	Դաս 1.Կրթությունն ու գիտությունը Նոր ժամանակներում
1	232-236	Դաս 2. Գիտատեխնիկական հեղաշրջումը XIX դարի վերջին XX դարի սկզբին
1	236-240	Դաս 3. Գեղարվեստական մշակույթը XVII դարում
1	241-245	Դաս 4. Գեղարվեստական մշակույթը Լուսավորության դարաշրջանում
1	245-249	Դաս 5. Գեղարվեստական մշակույթը Ռոմանտիզմի դարաշրջանում
1	249-253	Դաս 6. Ռեալիզմի գեղարվեստական մշակույթը XIX դարում: Մշակութային ճգնաժամ

Թեմատիկ պլանավորում

Դաս1. Խաչակիրների դարաշրջանը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար.

1. Որո՞նք էին խաչակրաց արշավանքների հիմնական պատճառները:
2. Ի՞նչն առիթ հանդիսացավ արշավանքների սկսվելուն:
3. Ե՞րբ սկսվեցին խաչակրաց արշավանքները, և ո՞վքեր էին ղեկավարում:
4. Ի՞նչ նպատակով ստեղծվեցին հոգևոր-ասպետական միաբանությունները:
5. Ներկայացնել խաչակրաց արշավանքների հետևանքները:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

խաչակրաց արշավանքների պատճառները:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

բնութագրել խաչակրաց արշավանքները և դրանց հետևանքները: